

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ մեկնարկային պայմաններ

- Հաճախորդներին սահմանված ժամկետներում ՀՀ առնվազն 5 (հինգ) մարզերում, սպասարկման հնարավորություն,
- Գնահատող ընկերության պատրաստակամությունը, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ բացված հաշիվներում ապահովել դրամական միջոցների շարժը, ոչ պակաս քան Բանկի և Բանկի հաճախորդների կողմից կատարված պատվերների չափով:
- Գնահատող կազմակերպության անձնակազմում առնվազն 2 (երկու) անձանց առկայություն, որոնց համար տվյալ ընկերությունը հիմնական աշխատատեղն է և որոնք ունեն՝
 - ա) Կրթության փաստաթուղթ, որը հաստատում է գնահատող գործունեության բնագավառում մասնագիտական գիտելիքներ ունենալու մասին՝ գնահատող գործունեության բնագավառում բարձրագույն մասնագիտական կրթության, լրացուցիչ մասնագիտական կրթության կամ մասնագիտական վերապատրաստման ծրագրերի համաձայն,
 - բ) Գնահատող գործունեության բնագավառում առնվազն 1 (մեկ) տարվա աշխատանքային փոձի առկայություն՝ որը հաստատված է կրթության մասին փաստաթղթով ու աշխատանքային գրքույկում գրառումներով:
- Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության վկայական՝ առնվազն 50.000.000 ՀՀ դրամի չափով:
- Հարկերի, ցանկացած մակարդակի բյուջեների կամ պետական ոչ բյուջետային ֆոնդերի պարտադիր վճարումների մասով ժամկետանց պարտքերի բացակայություն,
- Բանկի Հաճախորդների գույքի գնահատմամբ զբաղվող գնահատող ընկերությունների ու գնահատողների նկատմամբ քրեական ու վարչական գործերի հարուցման դեպքերի բացակայություն:
- Կազմակերպության կամ նրա աշխատակիցների վերջին 2 (երկու) տարվա ընթացքում գնահատման գործունեության կասեցման փաստերի բացակայություն:
- Գնահատողների ինքնակառավարվող կազմակերպությունների կողմից միջնորդ նամակների առկայություն (ցանկալի է),
- Վերջին 2 (երկու) տարվա ընթացքում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հետ աշխատանքային բացասական փորձի ու Գնահատող կազմակերպության հետ համագործակցության դադարեցման մասին որոշման ընդունման բացակայություն:

Անկախ գնահատող կազմակերպությունը Բանկի/գրավատուի հետ փոխկապակցված անձ չի հանդիսանում (չկա ընդհանուր սեփականություն և/կամ փոխադարձ երաշխիքներ և/կամ պարտավորություններ, կանոնադրական կապիտալում մասնակցության միջոցով միմյանց գույքի հսկողություն, ինչպես նաև հաճախորդի/գրավատուի Անկախ գնահատող կազմակերպության ղեկավար պաշտոնների համատեղում մեկ ֆիզիկական անձով):